ԿԱՐԾԻՔ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՐԴԻԹԵՐ ԿԱՄՈՅԻ «Հայ Առաքելական եկեղեցու Վրաստանի եվ Իմերեթի թեմի վարչակառավարման համակարգը XIX դ. 30-ական թ. – XX դ. առաջին տասնամյակում» ներկայացված Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրներից և գրականության ցանկից, հավելվածից:

Ատենախոսության ներածությունում հեղինակը ներկայացնում է թեմայի արդիականությունը, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը, ատենախոսության առարկան, նպատակը, խնդիրները, ժամանակագրական շրջանակները, մեթոդաբանությունը, գիտական ուսումնասիրվածության աստիճանն ու աղբյուրագիտական հիմքը:

Ատենախոսության շրջանակներում ուսումնասիրվել է թեմական վարչական կառույցը կազմող մարմինների աշխատանքային մեխանիզմը, թեմական կառավարման կենտրոնական և տեղական վարչական մարմինների գործունեության քննման օրինակով վեր է հանվել ժամանակի բյուրոկրատիայի դրսևորումները հոգևոր վարչությունում, ներկայացվել են թեմական վարչական կյանքի խնդիրները, ընտրությունների անցկացման առանձնահատկությունները և այլն:

Ատենախոսության արժեքավոր կողմերից հիմնականն այն է, որ ատենախոսի կողմից օգտագործված են բազմաթիվ արխիվային փաստաթղթեր, որոնք առաջին անգամ են գիտական շրջանառության մեջ դրվում:

Առաջին գլխում ներկայացվում է Վրաստանի և Իմերեթի թեմի կենտրոնական իշխանության ձևավորման գործընթացը «Պոլոժենիե»-ի ընդունումից հետո, ինչպես նաև Կոնստիստորիաների որպես թեմական կառավարման կենտրոնական վարչական մարմինների ստեղծումը: Ներկայացվում են առաջացած խնդիրները, ներքին կյանքին վերաբերող բազմաթիվ հարցեր, որոնք լույս են սփռում եկեղեցու գործունեությանը, կառավարման համակարգին և այլն: Խոսվում է աշխատանքի արդյունավետ կազմակերպման մասին:

Երկրորդ գլխում ներկայացվում է Վրաստանի և Իմերեթի թեմի եկեղեցական-վարչական կազմությունն ու կառավարման առանձնահատկությունները, ինչպես նաև փոխանորդի և գործակալի պաշտոնները թեմական կառավարման համակարգում: Ներկայացված են արժեքավոր վիճակագրական տվյալներ, որոնք կարևոր տեղեկություն են պարունակում եկեղեցու ներքին կյանքի ուսումնասիրման համար:

Երրորդ գլուխն ամբողջությամբ նվիրված է Վրաստանի և Իմերեթի թեմի ծխական համայնքների կառավարման հարցերին և իրադրությունը «Ծխական

կանոնադրության» ընդունման համատեքստում: Նշվում է, որ ծխական համայնքների կառավարման համար համակարգված և միասնական կանոնադրություն ստեղծելու փորձ կատարվեց Մկրտիչ Խրիմյանի կաթողիկոսության և XX դ. սկզբին լայն թափ ստացած Հայ առաքելական եկեղեցու բարենորոգչական շարժման շրջանում: 5 բաժիններից բաղկացած «Ծխական կանոնադրությունը» ժամանակավոր գործադրվեց 1900 թ., ապա հաստատվեց 1907-ին: Ատենախոսության շրջանակներում մանրամասն ներկայացվում է ծխական համայնքների կառավարման կարգը, ծխական ժողովի իրավասության շրջանակները, գործունեության առանձնահատկությունները և այլն: Նշվում է, որ «Ծխական կանոնադրությունը» գործնականում կիրառության ցածր արդյունավետություն ունեցավ, որն էլ պայմանավորված էր կանոնադրության թերի լինելով, համապատասխան պայմանների բացակայությամբ (նշվում է ժողովրդական լայն զանգվածների անտարբերության և կանոնադրության անշեղ գործադրությունը հսկող իշխանության բացակայութան մասին):

Քահանայական դասի խնդիրները ներկայացված են նույն գլխի երկրորդ ենթագլխում: Խոսվում է քահանաների ամսական ցածր վարձատրության մասին որպես հասարակական շրջանակներում հնչեղություն ստացած հարց: Ներկայացվում են Բաթումի, Գորիի օրինակները և թե ինչ կերպ լուծումներ ստացան այդ հարցերը նշված շրջաններում: Ատենախոսի կարծիքով, քահանաների ցածր վարձատրությունը առանցքային խնդիր է: Սակայն նշված թեզն ամրապնդման կարիք ունի: Մեր կարծիքով, երբ նշվում է քահանաների ծանր նյութական կացության մասին, իսկ վարձատրության չափը որպես խիստ անբավարար, անհրաժեշտ է ներկայացնել հասարակության մյուս շերտերի եկամուտների չափը, որպեսզի համեմատելով բացահայտվի խնդրի խորությունը:

Ատենախոսության մեջ կարմիր թելով անցնում է այն թեզը, ըստ որի, հայ քահանայական դասը մեծամասամբ ցածր կամ թերի կրթական մակարդակ ուներ: Այս թեզը կրկնվում է նաև ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում: Անաչառ կլիներ, եթե ատենախոսն այս թեզը հիմնավորեր, օրինակ, համեմատելով վրաց հոգևոր դասի ստորին օղակների կրթական մակարդակի հետ կամ թաթար մոլաների: Ատենախոսությունը կշահեր, եթե առկա խնդիրների օբյեկտիվ պատճառներն առանձնացվեին, հակառակ պարագայում կարող է թյուր կարծիք ձևավորվել հայ հոգևորականության մասին իբրև անգետ մի դասակարգի: Հուսով ենք, ատենախոսն իր հետագա աշխատանքներում հաշվի կառնի քննվող խնդրի նրբությունն ու կգնա օբյեկտիվ/սուբյեկտիվ գործոնների տարբերակման և համեմատական մեթոդաբանության ճանապարհով:

Չորրորդ գլուխը նվիրված է Վրաստանի և Իմերեթի թեմի վարչական կառույցի խնդիրներին ու բարեկարգմանը, մասնավորապես՝ թեմական կենտրոնական իշխանության ձեռնարկած քայլերին այդ ուղղությամբ: Այն դրսևորվեց հետևյալ քայլերով. որոշվեց կրճատել քահանաների թիվն ու հիմնել ապահովության գանձարան: Բարեկարգումը սկսվելու էր Թիֆլիսից: Քայլեր ձեռնարկվեցին դպրոցական հարցերի լուծման ուղղությամբ ևս: XIX դ. 90-ականներին ռուսական քաղաքականության կոշտացման պայմաններում մանրամասն ներկայացվում է

թեմակալ առաջնորդ Գևորգ արքեպս. Սուրենյանցի գործունեությունն ուղղված ծառացած խնդիրների համակարգված լուծմանը:

Չորրորդ գլխի 2-րդ և 3-րդ գլուխներում ներկայացվում է թեմի գործունեությունը հայ-թաթարական ընդհարումների շրջանում: Սակայն հեղինակը ամենուրեք շեշտում է, որ ընդհարումները սանձազերծվել էին ռուսական ցարիզմի կողմից, ինչը ճշմարիտ լինելուն զատ, թերի գնահատական է: Գիտական շրջանառության մեջ վաղուց դրվել է այն տեսակետը, որ 1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների առանցքային պատճառներից էր պանթուրքիզմի գաղափարախոսության առաջացումը, Թուրքիայից Այսրկովկաս ներթափանցած միսիոներների գործունեությունը, թաթաների շրջանում ազգայնականության սկզբնավորումը, Թուրքիայի հետ լեզվական և հոգևոր միասնության ուժգնացումը թաթարների շրջանում, այդ և բազմաթիվ այլ հիմքերով հայերի նկատմամբ ատելության խորացումը, ինչպես նաև ոչ պակաս կարևոր տնտեսական գործոնը:

Այնուամենայնիվ, ներկայացված թերությունները կրում են ոչ հիմնարար բնույթ և չեն նսեմացնում աշխատանքի կարևորությունը: Հուսով ենք, որ ատենախոսն իր հետագա գործունեության ընթացքում կգնա ճշգրտման և թերությունների վերացման ճանապարհով:

Հաշվի առնելով, ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՐԴԻԹԵՐ ԿԱՄՈՅԻ «Հայ Առաքելական եկեղեցու Վրաստանի եվ Իմերեթի թեմի վարչակառավարման համակարգը XIX դ. 30-ական թ. – XX դ. առաջին տասնամյակում» ատենախոսության մասին վերոնշյալը, կարծում ենք, որ այն համապատասխանում է Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան շնորհելու պահանջներին և բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին:

Պաշտոնական ընդդիմախոս

պ. գ. թ. Վարդանյան Թ. Ռ.

Թամարա Ռազմիկի Վարդանյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Գ.Վ. Պլեխանովի անվան Ռուսաստանի տնտեսագիտական համալսարանի

գիտական քարտուղար՝ Ս. Հ. Իսկաջյան